Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի

<<Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն >>

**համայնքային ոչ առևտրային կազմակերպության**

տնօրենի **2026** թվականի հուլիսի **-29** ի **N** 71-Լ հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի

<< Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության

դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները /չափորոշիչները/ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղերը/նյութերը/ |
|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի << Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակ ( 0.585դրույք ) (1 աշխատող ) | **1)** Որակավորման պահանջները՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝<br>1) Միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ<br>**2)** Ընդհանուր կպահանջները.<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝<br>1) Տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) Իմանա ստորև նշված նորմատիվ իրավական | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) Դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ<br>2) Դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից<br>3) Տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության | 1.Դիմում (ձև 1 )<br>2.Անձը հաստատող փաստաթուղթ<br>3.Կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)<br>4.Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում /<br>5.Ինքնակենսագրություն<br>6.Մեկ լուսանկար՝ 3*4չափի<br>7.Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ<br>Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական կցագրման վկայական<br>Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ( դրանց առկայությանդեպքում):<br><br>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ ա. ՀայաստանիՀանրապետության սահմանադրությունը , <<Կրթության մասին>>,<<Հանրակրթության մասին>>, <<Նախադպրոցական կրթության մասին>>, <<Լեզվի մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Լիցենզավորման մասին>>ՀՀ օրենքները Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, <<Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը>>, Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը,<br>Բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկայի հիմունքներին: | իրականացմանը<br>4) Դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի , երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար | է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով |

| Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
|---|---|---|
| Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ գյուղ Փոքր Մանթաշ 7 փ .2. 8<br>օրը՝ 2026թ օգոստոսի 31, ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություննե ր ստանալու համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Փոքր Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն >>համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, հեռ՝. +374 93-06-77-86<br>Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում(Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի <<22>>հոկտեմբեր 2024 թվական N 1981-Ա/2 հրաման ):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: | 2026 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 25-ը ներառյալ |